ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.12.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/313

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 29.11.2021թ. թիվ 26/26-1/19463-2021 գրությամբ «Վայք Գրուպ» ՍՊԸ Հ/Մ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի 18.11.2021թ. թիվ 847/1 գրության հիման վրա, 29.11.2021թ. թիվ 26/26-1/19463-2021 գրությամբ նախաձեռնել է «Վայք Գրուպ» ՍՊԸ Հ/Մ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Վայք Գրուպ» ՍՊԸ Հ/Մ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Վայք Գրուպ» ՍՊԸ Հ/Մ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Վայք Գրուպ» ՍՊԸ Հ/Մ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/313 ընթացակարգի շրջանակներում 03.12.2021թ. ժամը 09:40-ին և 08.12.2021թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 18.11.2021թ. թիվ 847/1 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի կարիքների համար անհրաժեշտ ռետինե ծածկույթների ձեռքբերման համար կազմակերպված «ՄՄԱՌՎ-ԳՀԱՊՁԲ-21/9» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (Armeps) միջոցով կազմակերպված գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից՝ «Վայք Գրուպ» ՍՊԸ Հ/Մ-ն հրաժարվել է պայմանագիրը կնքելուց, ուստի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետի՝ «որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց», որոշեց մերժել «Վայք Գրուպ» ՍՊԸ Հ/Մ-ի կողմից ներկայացված հայտը:

Քանի որ ի հայտ է եկել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերը, ուստի Ձեզ ենք ներկայացնում «Վայք Գրուպ» ՍՊԸ Հ/Մ-ի տվյալները և «ՄՄԱՌՎ-ԳՀԱՊՁԲ-21/9» ծածկագրով գնման ընթացակարգի արձանագրությունները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/313 ընթացակարգի շրջանակներում 03.12.2021թ. ժամը 09:40-ին և 08.12.2021թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/313 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/313 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի կողմից իր կարիքների համար ռետինե ծածկույթների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՄՄԱՌՎ-ԳՀԱՊՁԲ-21/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Վայք Գրուպ» ՍՊԸ Հ/Մ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.09.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Վայք Գրուպ» ՍՊԸ Հ/Մ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը protender.itender@gmail.com էլեկտրոնային փոստի միջոցով 28.10.2021թ. ծանուցել է Ընկերությանը՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.11.2021թ. նիստի թիվ 6 արձանագրությամբ արձանագրվել է, որ 28.10.2021թ. ընտրված մասնակից «Վայք Գրուպ» ՍՊԸ Հ/Մ-ին ուղարկվել է պայմանագիր կնքելու առաջարկ և կնքվելիք պայմանագրի նախագիծ: Մասնակցին տրվել է 10 աշխատանքային օր ժամանակ մինչև՝ 11.11.2021թ., որպեսզի ներկայացնի հաստատված պայմանագիրը: Սահմանված ժամկետում մասնակցի կողմից հաստատված պայմանագիրը չի ներկայացվել, և հանձնաժողովը որոշում է կայացրել համաձայն ընթացակարգի հրավերի 8.20-րդ կետի մերժել «Վայք Գրուպ» ՍՊԸ Հ/Մ-ի հայտը:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 29.11.2021թ. թիվ 26/26-1/19463-2021

գրությունը, «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի 18.11.2021թ. թիվ 847/1 գրությունը՝ կից փաստաթղթերով, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով սահմանվում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Այսպես, «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամի կողմից իր կարիքների համար ռետինե ծածկույթների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՄՄԱՌՎ-ԳՀԱՊՁԲ-21/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Վայք Գրուպ» ՍՊԸ Հ/Մ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.09.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Վայք Գրուպ» ՍՊԸ Հ/Մ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը protender.itender@gmail.com էլեկտրոնային փոստի միջոցով 28.10.2021թ. ծանուցել է

Ընկերությանը՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.11.2021թ. նիստի թիվ 6 արձանագրությամբ արձանագրվել է, որ 28.10.2021թ. ընտրված մասնակից «Վայք Գրուպ» ՍՊԸ Հ/Մ-ին ուղարկվել է պայմանագիր կնքելու առաջարկ և կնքվելիք պայմանագրի նախագիծ: Մասնակցին տրվել է 10 աշխատանքային օր ժամանակ մինչև՝ 11.11.2021թ., որպեսզի ներկայացնի հաստատված պայմանագիրը: Սահմանված ժամկետում մասնակցի կողմից հաստատված պայմանագիրը չի ներկայացվել, և հանձնաժողովը որոշում է կայացրել համաձայն ընթացակարգի հրավերի 8.20-րդ կետի մերժել «Վայք Գրուպ» ՍՊԸ Հ/Մ-ի հայտը:

Այսպիսով՝ ուսումնասիրելով Ընկերությանը ծանուցած լինելու փաստը հավաստող ապացույցը՝ արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը 28.10.2021թ. ծանուցել է Ընկերության vaykgroup@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին, մինչդեռ արձանագրում եմ հետևյալը՝

Համաձայն «ՄՄԱՌՎ-ԳՀԱՊՁԲ-21/9» ծածկագրով գնանշման հարցման մասին հայտարարության՝ Պատվիրատուն՝ «Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարան» հիմնադրամը, հայտարարում է գնանշման հարցում, **<u>որն իրականացվում է մեկ փուլով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով:</u>**

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.18-րդ կետի համաձայն՝ ***<u>հանձնաժողովի և (կամ) պատվիրատուի կողմից էլեկտրոնային ծանուցումներն ուղարկվում են</u>*** ***<u>համակարգի միջոցով</u>***...:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 9-րդ կետի 9.2-րդ, 9.3-րդ, 9.4-րդ և 9.5-րդ ենթակետերի համաձայն՝

9.2 Սույն հրավերի 1-ին մասի 8.25 կետով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը...:

9.3 Ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով:

9.4 Պայմանագիր կնքելու մասին պատվիրատուի ծանուցումն ընտրված մասնակցին ուղարկելու օրը հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ընտրված մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկում է ծանուցում՝ պայմանագիր կնքելու առաջարկը տրամադրված լինելու մասին:

9.5 Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Այսպիսով՝ համաձայն Ընթացակարգի հայտարարության՝ գնանշման հարցումն իրականացվել է մեկ փուլով՝ էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով, որպիսի պայմաններում, ինչպես և սահմանվել է Ընթացակարգի հրավերով, հանձնաժողովի և (կամ) պատվիրատուի կողմից էլեկտրոնային ծանուցումներն ուղարկվում են համակարգի միջոցով, ուստի գտնում եմ, որ Պատվիրատուն, պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը Ընկերությանը չուղարկելով էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով, գործել է Ընթացակարգի հրավերով սահմանված վկայակոչված պահանջների խախտմամբ, որպիսի պայմաններում գտնում եմ, որ Ընկերությունը չի կարող համարվել պատշաճ ծանուցված:

Նման պայմաններում գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Վայք Գրուպ» ՍՊԸ Հ/Մ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 29.11.2021թ. թիվ 26/26-1/19463-2021 գրությամբ «Վայք Գրուպ» ՍՊԸ Հ/Մ-ին գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**